«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գ. Նարեկացու կենսագրության և « Մեղեդի ծննդյան» տաղի ուսուցման իմ փորձը
ԱՌԱՐԿԱ	Հայ գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Թերեզա Հակոբյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	<<Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Բովանդակություն

1. Բովանդակություն ---------- էջ 1
2. Ներածություն ---------- էջ 2
3. Հիմնական մաս ---------- էջ 3-16

«Գ. Նարեկացու կենսագրության և «Մեղեդի ծննդյան » տաղի

ուսուցման իմ փորձը» ---------- էջ 3-16

ա/ Նարեկացու կենսագրությունը---------- էջ 3-9

բ/ ՛՛Մեղեդի ծննդյան՛՛ տաղը ---------- էջ 10-16

4. Եզրակացություն ---------- էջ 17-18
5. Օգտագործված գրականության ցանկ ---------- էջ 19

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթության պետական չափորոշչում ներառված է սովորողների արժեքային համակարգի ձևավորումը՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է սովորողի զինում այնպիսի գիտելիքներով ու հմտություններով, որոնք նրան հնարավորություն կտան մարդկության առաջընթացին համընթաց քայլել, դիմագրավել մարտահրավերներին:

Բոլոր դարերում ու ժամանակներում գրականության գլխավոր նպատակն ու խնդիրը մարդու կյանքի և գործի, նրա ճակատագրի ուսումնասիրությունն է: Ուսուցման նպատակը ուսումնական գործընթացի հիմքն է, և ողջ գործունեությունը ուղղվում է այդ նապատակի իրագործմանը:

Սովրողը դառնում է գործընթացի գործուն մասնակից և հասկանում նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները:

Հետազոտական ածխատանքը ՛՛Գրիգոր Նարեկացու կյանքը և ՛՛Մեղեդի ծննդյան՛՛ տաղի ուսուցումը՛՛ թեման է:

Գրական-գեղարվեստական բնագրի ուսումնասիրությունը, դրա շուրջ կատարվող հետազոտական աշխտանքը միջոց է դառնում և՛ պատկերների կուտակման, և՛ ինքնաարտահայտման, և՛ վերացական մտածողության, և՛ դոսքի զարգացման, և՛ ստեղծագործական ունակությունների դրսևորման համար, որոնց ամբողջությունը ձևավորում է սովորողի կարողունակությունը:

Թեմայի նպատակը գումարն է, իսկ խնդիրները՝ գումարելիները:

Խնդիրները՝

- ծանոթանալ ազգային արժեքներին և բնաշխարհին,
- հայկական վերածննդի ժամանակաշրջանը և գեղարվեստական մտածողությունը,
- հեղինակի նորարարությունը և արդիականությունը,
- ձևավորել մեկնաբանելու, երևակայելու, մտորումներըստեղծագործելու գիտակցում,

- նպաստել սեփական երկրի մշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը
- բնության և մարդու նկատմամբ արժեքային կողմնորոշում և վերաբերմուն ձևավորել
- միջառարկայական կապ

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ, որը սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման ընթացք է, ուսուցչի և սովորողների կազմակերպման ձև:

1.Գրիգոր Նարեկացու կենսագրությունը

Գրիգոր Նարեկացու հայտնությամբ հայ գեղարվեստական գրականությունը և մտածողությունը մտնում են միանգամայն նոր փուլ: Նարեկացին իր աստվածային հավատը վերածում է խոսքի և գեղարվեստական հյուսվածքին հաղորդում հոգիների վրա ներգործելու, գեղեցիկը արժևորելու տիրական ազդեցություն: Կենդանի է խոսքը, թափանցում է մարդու հոգում խորքը և ապրեցնում նրան, իսկ եթե հիվանդ է, բուժում:

Նարեկացին այն ճշմարիտ հավատացյալներից մեկն է , ով դասվել է սրբերի շարքը և հավերժական փառք նվաճել իր աստվածային հանճարով:

Տեղին է այստեղ հիծել Վիլյամ Սարոյանի խեսքը, թե աղոթքը օվկիանոս է, որը դառնում է ընդարձակ, երբ ավելի հեռու ես ,լողում նրա մեջ:

Հետազոտական աշխատանքի նպատակը կենսագրության և բնագրի լավագույն մեկնաբանությունը, բառային և պատկերային համակագի ուսումնասիրման և բացահայտման համակողմանի գործընթացն է: Բոլոր աշակերտները խոսեն, մասնակցնեն մեկնաբանություններին, քանի որ բառձրաձայն մտորումները երևակայելու, ստեղծագործելու հնարավորություն են տալիս:

Ստեղծագործական մտածողության զարգացման համար աշակերտներին հաճախակի դնում եմ այնպիսի խնդրահայուց իրավիճակներում, որոնց մեջ նրանցից պահանջվի

հետազոտական մոտեցում: Այնպես եմ կազմակերպում դասը, որ աշակերտների մեջ ծագեն ոչ միայն պրոբլեմային հարցեր, այլև դրանք ինքնուրույնաբար լուծելու ձգտում:

Ստեղծագործական մտածողությունը հետազոտական աշխատանքի հիմնական բաղադրատոմսն է, երբ աշակերտն ինքն է բացահայտում, ինքն է գտնում խնդրի լուծման մինչ այդ իրեն անհայտ ուղին :

Ուստի ցանկացած գրական երգ կարելի է ծառայեցնել հիմնական նպատակին՝ սովորողների ազատ և անկաշկանդ խոսելու, սեփական մտքերը դիպու և պատկերավոր լզվով արտահայտելու կարողության զարգացֆմանը, որոնք տանում են կարողունակության:

Նպատակին հասնելու համար առանձին և հատուկ խուբ են կազմում այնպիսի մեթոդները, որոնք զարգացնում են սովորողի գործնական կարողություններն ու հմտութնյունները:

Առավել տեսանելի ու դիդակտիկ պատկերացնելու համար Նաևեկացու աշխարհը, ծննդավայրը, նախապես միասին / համակարգչային դասարան/ կամ տանը նայում ենք վերջերս Արևմտյան Հայաստանում նկարահանված ՛՛ Հովիվը՛՛ գեղարվեստական կինոնկարը /ռեժիսոր՝ Դավիթ Ավդալյան , սցենարիստ՝ Արթուր Էդար, Իկար ֆիլմ ստուդիա 2011թ./:

Հնաձնարարում կամ կարդում եմ Հովհաննես Շիրազի ՛՛Վանն է դրախտն …՛՛ բանաստեղծությունը:

Կենսագրությունն ուսումնասիրելիս էքսկուրս են կազմակերպում /4-5 րոպե/, թե ինչպես է արժևորվել Նարկացի մարդը, բանաստեղծը հետագա դարերում: Զարգացնում եմ հետաքրքրությունը նյութի հանդեպ: Նշում եմ Ռաֆֆու ՛՛ Աղթամարա վանքը՛՛ ճանապարհորդական ակնարկը, լսում ենք ՛՛Զայն տուր, տուր ով ծովակ՛՛ երգը / բանաստեղխության հեղինակ՝ Ռաֆֆի/, հիծեցնում Ռաֆֆու քար մասին, որի վերաբերյլ հիմանակն դպրոցում գրել են փոխադրություն: Պատմում եմ նաև Վահրամ Ալազանի ՛՛ ուղևորություն դեպի Նարեկ՛՛ վեպի մասին, որից տարրեր կան կինոնկարում:

Այսքանից եզրակացությունը մեկն է . բոլոր ժամանակների Նարեկացի: Ժամանակակից մանկավարժությունը ուսուցման և դաստիարակման գործընթացը արդի կյանքի պահանջներին համապատախանեցնելու, անձնակենտրոն դարջնելու նպատակ

ունի: Կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերումը, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտություններիբ ձևավորումը, այսինքն՝ կարողությունը:Ուստի միայն դասագրքով ուսուցումը թերի է մնում, անհրաժեշտ է օգտվել , կիրառել նաև տեեկատվական նյութեր, որոնք կընդլայնեն աշխարհայացքը, կնպատեն ուսուցմանը:

Հայ գրականության ուսուցման համակարգն ունի նաև կարևոր հիմնախնդիր. Սովորողին ընդգրկել հասարակական բազմաբնույթ հարաբերությունների մեջ՝ ձևավրելով ճանաչողական - տրամաբանական համագործակցություն, հաղորդակցման ստեղծագործական կարողություններ, ինչպես նաև ինքնուրույն գործունեություն ծավալելու, որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու հմտություններ:

Յուրաքանչյուր դաս ստեղծագործություն է, և ուսուցիչը ստեղծագործող է:

Հայ գրականության յուրաքանչյուր դաս նարև արվեստ է, և ուսուցիչը որոնում ու փնտրում է իր արվեստը սովորողներին մատուցելու նորանոր ձևեր և մեթոդներ:

՛՛ Գրիգր Նարեկացի՛՛ թեմայի ուսուցումը կատարում ենք գրապատմական մոտեցումով, պատմության և արվեստի, աշխարհագրության և փիլիսոփայության քննարկումերով, իսկ արդյունքում Նարեկացին կերպարանում է անխարդախ դիմագծով՝ որպես համայն մարդկության ողբերգությունն իր հոգում ամբարած հանճար, մարդագետ, մարդասեր:

Նարեկացին նաև իր ժամանակի խորհրդանիշն է. նրա կենսագրության մեջ ամբարված են իր ապրած դարի տագնապները, մարդուն կատարյալ տեսնելու ապրումը:

Բանաստեղծի նկատմամբ հետաքրքրություն և ակնածանք ապահովելու համար համակցված դաս ենք կազմակերպում: Քարտեզի վրա ցույց են տալիս Վանա լիճը, շրջակայքը, խոսում Նարեկա վանքի մասին; Անդրադառնում ենք կերպարվեստին, երաժշտությանը, ազագրությունը: Շեշտում ենք նաև, որ Նարեկացին բնանկարային քնարերգության հիմնադիրն է, օժտված է բնության խոր զգացողությամբ:

Հետրաբար՝ Նարեկացին և նրա ստեղծագործությունը մեր գրականության ճանապարհի երկար սպասված հանգրվանն է՝ արմատները հայկական լեռնաշխարհում ,

բունը, հոգին՝ իր ապրած դարը, իսկ ճյուղերն ու պտուղները՝ մր օրերում և հավերժության մեջ:

Նարեկացին որքան պատմական է, նույնքան էլ արդիական, պահանջված, ուսուցանող, վարպետ, ուսուցիչ:

Նարեկացու կենսագրություն ուսումնասիրելու դասին ստեղծում ենք ծանոթ միջավայր. Վանալ լիճ, Աղթամար կղզի, Նարեկավանք:

Տարին երի փորձը և կենսագրության կամ գրական նյութի համակողմանի ուսումնասիրությունը ընկալելի լարձնելու համար կարելի է տեղայնացնել:

Գյուղը՝ Սառնաղբյուրը, որը սփռված է Արագածի արևմտյան ստորոտին, ինչ-որ չափով նման է Նարեկացու ծննդավայրին:Գործող եկեղեցին թիկնել է ժայռին ու հսկում է գյուղի անդորրը, իսկ գյուղից ներքև՝ արևմուտքում, լեռներով շրջապատված փոքրիկ ջրամբարն է: Գեղադիր է ջրամբարը, ինչպես Վանա լիճը: Ջրամբարից ներքև Կարմիր կոչվող հոգեվանքը:

Նմանություն է ստեղծվում Նարեկացու և սովորողի ծննդավայրերի միջև, որն օգնում է ճանաչողական, հայրենագտական արժեքների ընկալմանը: Այս ամենին լրացնում է նաև ֆիլմից քաղված գիտելիքը:

Կիրառում ենք մտագրոհ, ու սովորողներից յուրաքնչյուրն արտահայտում է սեփական տեսակետները, թե երբ Նարեկացու աչքերում և հոգում ծովակի ծփանքն էր, ինչ էր խորհում:

Սա խթանում է ստեղծագործական մտածողությանը, և միտքը միտք է ծնում: Թե՛ ծովակի, թե՛ ջրամբարի ծիծղուն, վետվետուն ալիքները լուսավոր մտքեր են ծնում:

Այս պատկրները հիմք դարձան հայկական վերածննդի , որի խորհուրդն է մարդը, կյանքը :

Դասի ուսումնական նպատակները, որ աշակերտները կընկալեն և կմեկնաբանեն և՛ հեղինակի կյանքը, և՛ տաղի հիմնական գաղաղափարը , և՛ կերպարային համակարգի առանջնահատկությունները, կկարողանան միմյանց հարցեր ուղղել, ձեռք կբերեն դիմացինին ուշադիր լսելու և նրա կարծիքը հարգելու անջնային որակներ,

դատողություն անել, միմյանց հետ հաղորդակցվելու, բարոյահոգեբանական մնոլորտի ապահովում լիովին կատարվում է:

Կենսագրության դասի վերջնարդյունքը հետևյալն է. թե՛ ուսումնառության տարիներին, թե՛ ճգնակեցության ընթացքում Նարեկացին իր կողքին միշտ զգացել է նախանձի, չարության, կեղծիքի, տառապանքի, թշնամության ցավը:Եվ նրա լուսավոր հոգին ջերմացել և խաղաղվել է բնության մեջ, ծովակի ալիքների հետ զրուցելիս, վետվետուն ալիքների ու գոհար վարդերի հետ խոկալիս:

Խոսում ենք նաև այն զրույցների մասին, որոնք հյուսվել են Նարեկացու անվան շուրջ:

Սովորողներն իրենց դիրատկումներից և ուսուցչի ուղղորդմամբ հանգում են եզրակացության, որ Նարեկացին հպարտ մենության , դժվաին ուղու, ինքնարժեքի գիտակցման խոր ընդհանրացում է, կապող օղակ ժամանակների, հայ մտքի նորովի բացահայտող:

Նախատեսված խնդիրները կենսագրության ուսումնասիրությունից տալիս են ցանկլի արդյունք, քանի որ սովորողն իր միջավայրում /կամ հակառակը/ պատկերացնում է գրողին, ապրումակցում, հաճախ իր և հեղինակի ապրածն ու զգացածն համադրում, հակադրում, ստեղծում աշխարհ, որը հիմք կդառնա ստեղծագործությունն ուսումնասիրելու:

Դասի արդիականացումը տալիս է ցանկալի արդյունք և պահովում է ստեղծագործության բազմակողմանի ուսումնասիրության:



2. ՛՛Մեղեդի ծննդյան՛՛ տաղը

Հայկական վաղ վերածննդի մտածողության քնարական դրսևորում է ՛՛Մեղեդի ծննդյան՛՛ տաղը : Տաղում պատկերված է տիրամայրը՝ Մարիամ աստվածածինը: Սա տաղի թեման է: Ապա մեկնաբանում եմ, որ բանաստեղծության քնարական հերոսուհին բնավ նման չէ վերերկրային տիրամորը: Ինչու՞: Նարեկացին պատկերում էր տիրամորը՝ աղոթատեղից՝ ճգնարանից հավատացյալի, կրոնակն երկյուղածությամբ դիտելով այն իրական կույսին,որ ապրում , ծնչում է երկրային կյանքով : Ցուցադրում եմ Ռաֆայելի ՛՛Սիքստինյան Մադոննան՛՛ և Վինչիի Մադոննան: Աշակերտեները ներկայացնում են նկարներ, մեկնաբանում, վերլուծում:

Ներկայացնում եմ, որ տողը քնարական ստեղծագործություն է ,որը կոչվում է նաև երգ, երգվող բանաստեղծություն: Տաղ անվանումը լայն կիրառություն ուներ միջնադարում:

Նարեկացին բնությն ամբողջության մեջ է ըմբռնում սիրո մեծ զգացումը: Նրա գրչի տակ կենդանանում, շլացնող պայծառությամբ երևում է իրականը: Նարեկացին բնության մեջ է փնտրում մարդու հոգու ձգտումը դեպի սերը, գեղեիկը, իդեալը:

Նարեկացու տաղում կույսը բնության հետ կազմում է մի հավերժական միսանություն:Նա երգում է կույսին՝ որպես աստվածային անձեռակերտ, կատարյալ, շքեզ ստեղծագործություն:

Գեղուհի կույսի կերպարը բացահայտում է Նարեկացու անհատակականությունը, վերաբերմունքը հոգեկան ու հուզական աշխարհը: Որքան վանական աշխարհը սանձահարում էր բանստեղծի զգայական ապրումների աշխարհը, այնքնա նրա հոգին, միտքը, ստեղծագործությունը որոնումների մեջ էին մարդու կողքին, մարդու հոգեկան ու մտածական գործերի մեջ:

Որքան ուսումնասիրում եմ Նարեկացում ստեղծագործությունը, բացահայտում եմ ե որքան հզոր է եղել հեղինակի կապը ժողովրդական արվեստի հետ:

Տաղի ուսուցման նպատակն ու խնդիրներն են դառնում չափածո տեքստի բառային, պատկերային համակարգի ուսումնասիրությունը նաև , որոնք սովորողին պատկերավոր մտածողություն և խոսքի զարգացման անփոխարինելի միջոց են :

Ընթերցում ենք գրաբար և թարգմանված տեքստը , ապա արձակ շարադրանքով ներկայացնում եմ՝ ուղղորդելու ստեղծագործության ուսուցման նպատակներին և խնդիրներին:

Ծիծաղախիտ ծովի մեջ աչքերը ծով և այտերը նռնենի են ու դափնեվարդ,հասակը գեղաշիտակ է, ձեռքերը քնքուշ են, դաստակները՝ մանուշակի ծիրանագույն փունջ, բերանը երկթերթ ծաղիկ է, լեզուն՝ տավիղ, վարսերը՝ շողշողուն և այտերի շուրջը բոլորած: Ծոցը լուսափայլ է կարմիր վարդերով լեցուն: Նա բուրում է կնդրուկի պես, զարդարված է գեղեցիկ պատմուճանով , որ կապույտ,որդան կարմիր ու ծիրանի գույնով է ոսկեշողում:

Արծաթափայլ գոտին նրբակերտ է, ոսկեծայր՝ զարդարված անգին ակնեղենով…

Տաղի արդյունավետ ուսուցումը հաջողվում միայն բառային աշխատանքով:Նարեկցու տաղերի բառագանձը ստեղծում է քնարական, տեսողական և մեղեդային պատկերներ :

Մեթոդը, որով կարելի է սովորողին մատուցել Նարեկացու միտքը, լեզվամտածողությունը, նախապես կազմված բառարանն ենք տալիս՝ գրական արդի համարժեքը կամ հոմանիշները:

Երբ սովորողը ընկալում է տաղի բառերի աշխարհը, փորձում է նրան տանել պատկերների և հույսերի աշխարհ:

Այստեղ կարևորում եմ աշակերտների ինքնուրույն ,ստեղծագործական աշխատանքը , խնդրահարույց մոտիվները, որոնք ուղղորդում են սովորողին պրպտել, գտնել, հիանալ, հուզվել ու իմաստանալ:

Թվարկված խնդիրները լուծելու համար կիրառում եմ մտագրոհ՝ կերտելու գեղեցիկ ու զարդարուն կնոջ կերպարը: Եզրակացնում են, որ անշունչ քանդակ չէ, այլ կենդանի, շարժուն, գեղանի արարած:

Բազմաբնույթ են հարցերը, պատասխանները տարբեր մեկը մեկին շարունակող, լրացնող, հակադրվող: Քայլ-քայլ մոտենում ենք Նարեկացու հոգու թրթիռներին:

Բոլոր ժամանակները պատմում են Նարեկացու անչափելի սիրո մասին , խորանի դիմաց ծնկաչոք աղոթքի, որ մարդկության առավոտները խաղաղ բացվեն, մարդը օծվի հավերժության լույսով:

Սովորողներին մտքով տանում եմ Նարեկացու ճգնարան, ուր մեծ աղոթասացը զրույցի է բռնվել Աստծո հետ: Հրթական անգամ գեղաշիտակ իրանով , գեղեցիկ պատմուճանով կույսը՝ հայուհին, եկել է մոմ վառելու և աղոթելու : Նա ընդհատում է բանաստեղծի աղոթքի միտքը :

Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում

Հուզավարար կենսատու սեր[1]:

Խայտում են ծով աչքերը, որոնք ծավալվում են այգաբացին երկու արեգկի նման, և նռնենի այտերից լուսացնցող առավոտի շողն է իջնում.

Աչքն ծով ի ծովն ծիծաղախիտ

Ծաւալանայր յառաւօտուն,

Երկու փայլակնաձև արեգական նման.

Շողն ի յիմն իջեալ յառաւօտե լոյս…

Կույսի ծաղկափթիթ մարմնի սրտից կարկաչում է կենսատու սեր:

Խնդիրները ներկայացնում եմ և դասարանը բաժանում երկու խմբի՝ աղջիկ և տղա՝ պատասխանելու հետևյալ հարցերին.

ա/ Ի՞նչ էր մտածում Նարեկացին,

բ/ Ի՞նչ էր մտածում կույսը:

Հետաքրքիր պատասխաններ են հնչում գնահատանքի, արժևորման, հայւհու կերպարի, հագուստի, սանրվածքի, արդուզարդի,հպարտության, իր հմայքին գիտակից, բնության նման շքեղ, բնության նման պարզ ու բարդ:

Մտագրոհը բացում է սովորողի զգացական աշխարհը, նա ընդունում է , թե որքան հզոր է բանաստեղծի խոսքը, զգացմունքն այդ կույսի հանդեպ, որին արժևուրում է որպես Աստվածամայր:

Անդրադարձը պատկերային համակարգին ավելի է սրում սովորողի հուզական աշխարհը, քանզի ըստ իս, նա այդ պահին կերտում է նաև իր Նարեկացու կամ իր Աստվածամոր կերպարը:

Ծով են աչքերը, Վանա ծով ու ծիծաղախիտ են, Վանա ծով ու ծիծաղախիտ են, զգեստը, գույների ու բույրերի խաղը , շարժուձևը. Շողարձակում է կույս հայուհին:

Անուշաձայն է նա, վարդ է կաթում շուրթերից, քաղցրերգում է լեզվի տավիղը: Վարսերն անգամ շողարձակում են կենսատու և գինեթույր սեր: Քայլում է հանդարտիկ, չեմում է թիկնեթեկին, ոտնահետքից լույսի շող է կաթում:

Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով.

Ոտիցն ի գնալ շողն ի կաթել առնոյր:

Տաղի վերջում չնայած Նարեկացին հիշեցնում է, որ խոսքը Մարիամ Աստվածածնին է վերաբերվում, բայց ամբողջ տաղն ընկալվում է իբրև գեղեցիկ կնոջ գովերգություն:

Կնոջ գեղեցկության պտկերացումից ընդամենը մի քայլ է մնում մինչև սիրո զգացմունքի պատկերումը: Նարեկացին կատարել է նաև այդ քայլը , երգել է սերը, աստվածային սերը,որը ծաղկում է մարդու և բնության մեջ:

Դասի վերջնարդյունն սպասելի է. սովորողները տեսնում են իրական, գեղատես, չքնաղ կույսի, որն իր ողջ էությամբ կենսատու սեր է ու տիրել է բանաստեղծ Նարեկացու հոգուն:

Նարեկացու գովերգած կինը՝ Տիրամայրը վաղ հայկական վերածննդի ամենաբանաստեղծական կերպարն է: Նրա անձեռակերտ գեղեցկությունն օժտված է կանացի գրավիչ նրբաձևությամբ: Նա վեհ է, խաղաղ:

Եզրակացությունը մեկն է. գեղեցիկն ու սքանչելին ողողված ն լուսավոր երանգներով :

՛՛Ծննդյան՛՛ տաղը ուսուցանելիս միշտ կանգ եմ առել այս տեղերի վրա.

Կամար կապած թևենը գիրգ՝

Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,

Ելևէջներն հյուսում իրար.

Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին:

Դեռ տասներորդ դարում Նարեկացին կանացի գեղ ու հմայքի, շարժման, քայլվածքի դրվագ է նկարագրել,արժևորել կանացի գեղեցկությունը շարժման մեջ, որը քսաներորդ դարում կիրառում են նորաձևություն ցուցադրող աղջիկները բեմին՝ թևերիը կոնքերին պահելով: Կամ ձեռքի շարժումները, որոնք նայողին գրավում, տանում են հայացքով, մտքով, հոգով:

Ապա փորձում եմ ստեղծել սովորողի մոտ երևակայական տրամաբանություն ու տաղից ՛՛քամել՛՛ մեղեդի, երաժշտություն:

Սովորողը մտապատկերներում, որը հետո բացահայտում է, ստեղծում է իր սիրելիի կերպարը ու գտնում համապատասխան մեղեդային հերոս կամ հերոսուհի:

Դասն համարում եմ հաջողված, երբ սովորողները թե՛ ժամանակակից, թե՛ ժողովրդական երաժշտության և տաղից հորդող մեղեդին համադրում են: Թվարկում են վերնագրեր և համակցում տաղին՝ գտնելով տիպականը՝ հայկական ժողովրդական երգ ՛՛Նուբար, Նուբար՛՛:

Նուբարի բոյը չինար է,

Աչքերը նուշ ու խումար է,

Երեք օրվա լուսնի նման

Ունքերը կեռ ու կամար է:

Նուբար կերթա օրոր – շորոր,

Նուբարի յար կայնե մոլոր,

՛՛Ա՛խ՛՛ կքաշե գիշեր ու զոր

Ու ման կուգա գյուղի բոլոր[2]:

Եվ ով իմանա, գուցե Նուբար երգողը ևս Նարեկացի էր կարդում, մտորում:

Հետևում է նաև եզրակացությունը. ժողովուրդն ըմբռնել է տաղի ոգին ու ստեղծել բազմաթիվ երգեր:

Սա Նարեկացու կամ հայ գրականության ամենափայլուն գյուտերից մեկն է, որն արժե զարգացնել:

Գունային ճոխությամբ աչքի է ընկնում տաղը : Գունազարդ է զգեստը:

Տաղի և մյուս տաղերի ուսումնասիրությունը գրական հերոսի բնավորության գծերի, արտաքինի, շարժուձևի քնությունը սովորողին սովորեցնում է հասկանալ մարդկանց, տեսնել ու զգալ հերոսի, տվյլ մարդու թաքնված ներաշխարհը: Այսպիսի մոտեցումը սովորեցնում է ապրումակցման, գրական հերոսները իրական կյանքից վերցված մարդկային բնավորություններն են: Հերոսների արարքների մտքի քննությունը մարդու կատարելագործման, նրա բարոյական նկարագրի կերտման միջոց է: Մարդը, սովորողը ինքնադաստիարակության հզոր շարժառիթներ է գտնում գրական երկի ուսումնասիրության ընթացքում:

Հայ ազնվականներն մտածում էին շքեղ հագուստի մասին ու կանանց, դուստրերին պճնում էին՝ գույներն ստանալով հիմնականում բնաշխարհի քարերից:

Տաղի ենթատեքստում կարելի է խոսել նաև կենցաղի , ազգագրության շատ արժեքների մասին:

Տաղի ուսուցման արդյունավետությանը մեծապես նպաստում է համեմատության համար ընտրված նյութերը, դիդակտիկ պարագաները, տեղեկատվական միջոցների նպատակասլաց կիրառումը:

Նմանատիպ դասապրոցեսը հնարավորություն է տալիս տեսնելու դասի ընթացքը՝ պարզելու ձեռքբերումներն ու դժվարությունները, իրականացնել քայլեր, որոնք ուղղված են դասապրոցեսի բարելավմանը՝ սովորողին դարձնելով ուսումնական գործընթացի մասնակից:

Ապահովում եմ սովորողների գործուն մասնակցությունը ուսումնասիրությանը, կիրառում եմ ինքնագնահատման և փոխադարձ գնահատման գործիքները: Եվ հետևողական եմ այն փաստին, որ երևա սովորողի գործունեությունը:

Հանձնարարում եմ քնարական հերոսուհու համար ստեղծել ՛՛կենսագրական բանաստեղծություն՛՛, որի համար սովորաբար ընդունված են հետևյալ բաղադրիչները՝ անունը, բնավորությունը, ինչ է զգում, սիրում է, ծագումը, բնակվում է, ազգանունը:

Տաղի ուսումնասիրությունը, գրական հերոսի բնավորության գծերի, արտաքինի, շարժուձևի քնուությունը սովորեցնում է հասկանալ մարդկանց, տեսնել ու զգալ հերոսի, տվյալ մարդու թաքնված ներաշխարհը: Այսպիսի մոտեցումը սովորեցնում է ապրումակցման, քանի որ գրական հերոսներչը կյանքից վերցված մարդկային բնավորություններ են:

Հերոսների արարքների, մտքերրի, կերպարի քննությունը մրդու կատարելագործման, նրա բարոյական նկարագրի կերտման միջոց է:

Մարդը, սովորողը ինքնադաստիարակության հզոր շարժառիթներ է գտնում գրական երկի ուսումնասիրության ընթացքում:

Նպատակին հասնելու ճանապարհը տաղի բովանդակության արդիականացումն է, սովորողների կարողունակությունների զարգացումը, ինչպես նաև դիրքորոշումներն ու արժեքն երի ձևավորումը:

Եզրակացություն

Բարդ ու հետաքրքիր է Նարեկացու բանաստեղծական աշխարհը, որն օժտված է նրբերանգներով և ուսնելի է:

Ուսուցիչը, ուսուցանողը համակողմանի գործունեությամբ պետք է իրականացնի, նպատակը, որ սովորողները զգան Նարեկացու քնարերգության հմայքը:

Դասավանդման ընթացքում բացահայտել եմ, որ պետք է շատ կարդալ՝ Նարեկացուն լավ ըմբռնելու համար, պետք է սրտով ու հույզերով զգալ, վերապրել, ձուլվել էությանը:

Յուրաքանչյուր դաս սկսում եմ վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ, նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Դասի մեջ ներդնում եմ կրթական – դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման գործունեություն, սրանից բխող դիդակտիկ տարրեր:

Դասապրոցեսում սովորողը ոչ միայն պետք է տիրապետի տեղեկություններին ու փաստերին, այլև յուրացրած գիտելիքը հանգամանորեն կիառի, ներկայացնի, մեկնաբանի, վերլուծի, կատարին բացատրական աշխատանք: Այս ամենին հասնում եմ՝ ապահովելով միջառարկայական կապը, երբ աշակերտը իր կուտակած գիտելիքները համադրում է նորին, ինքնուրույն եզրակացություններ կատարում, ձևավորում գրագետ ու տրամաբանական խոսք: Դասի հուզականությունը ապահովում եմ՝ կիառելով ստեղծագործության և երաժշտության կապը:

Սովորողների գիտելիքի յուրացման համար առաջարկում եմ այնպիսի խնդիրներ, որոնք հնարավորինս ապահովում են սովորողի և անհրաժեշտ գիտելիքների գործնական իրացումը, և՛ ուսումնական պատրաստվածությունը, և՛ ինքնուրոյն մտածելում տրամաբանելու ունակությունը ստուգելու, բացահայտելու համար:

Հետազոտական աշխատանքը տեքստով կատարելով՝ հաշվի եմ առել ոչ միայն գեղարվեստական, դաստիարակչական մտածողությունը, այլև աղերսները համաշխարհային գրականությանը և արվեստին:

Սրանք նպաստում են սովորողի մտավոր կարողությունների զարգացմանը և մտածական գործունեության ակտիվացմանը, ստեղծագործաբար աշխատելու, ճանաչողական ու հոգևոր զարգացումը խթանելու:

Աշխատում եմ հնարավորինս մատաղ սանի սրտում բորբոքել սրբազան ու զանիվ, կրոնական ու բարոյական զգացմումներ և օգնել սովորողին՝ ունենալու ճիշտ հայացք ազգայինի, գեղեցիկի, շրջապատի մասին և ըստ հնարավորինս՝ լրիվ գաղափար այն մասին, ինչ ինքն անում է:

Այսօր իմ նպատակն է շարունակ զարգացնել եղած ուսանելի ու դրականը, բարելավել սովորողի ուսուցման գործընթացը, կրթության որակն ու բովանդակությունը՝ կյանքի կոչելով նորանոր ծրագրերը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Զաքարյան Հ. , Ավետիսյան Յու. Քրեստոմատիա, Զանգակ , Երևան 2019, էջ 22

2. Նարեկացի Գ. « Տաղեր» ,Սբ. Էջմիածին 2019թ., էջ 27

3. Շիրազ Հ. «Վանն է դրախտն…» , «Քնար Հայաստանի», գիրք երրորդ ,Երևան 1974 , էջ 170

4. Տալյան Շ., Չաքմիշյան Վ., Երգարան, Երևան 1966թ. էջ 48